Արձանագրություն N 3
ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (E-AUCTION) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 05 փետրվարի 2019թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Օհանյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան
Հ. Ղազազյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Նավասարդյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Հ. Օհանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
3. Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին,
4. Մերժված հայտերի մասին,
5. Գնահատման մասին,
6. Հարցում կատարելու մասին,
7. Ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին,
8. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Անհամապատասխանությունները շտկելու մասին
(Հ. Օհանյան)

Ընդունել ի գիտություն՝ քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել էին անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշել էր.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին՝ հայտը շտկելու նպատակով, որը պետք է ներկայացներ իր շտկումները էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, մինչև 05.02.2019թ. 15:00 ներառյալ:

Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին
(Հ. Օհանյան)

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գները հետևյալն են

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ

		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային արժեք
1	դիզելային վառելիք, ամառային				
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	2018750	20 %	2422500	2451000

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մերժված հայտերի մասին
(Հ. Օհանյան)

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի մերժել «ՖԼԵԾ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:
Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Գնահատման մասին
(Հ. Օհանյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝		
1	«ՄԱՔՍ ՕԻԼ» ՍՊԸ	1,

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հարցում կատարելու մասին
(Հ. Օհանյան)

ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում հրավերում նշված հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:
Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
(Հ. Օհանյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:
Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>
(Հ. Օհանյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀՀ-ԷԱՃԱՊՁԲ-19/7 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (E-AUCTION) միջոցով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի.

նախագահ՝ Հ. Օհանյան

գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան

Հ. Ղազազյան

քարտուղար՝ Հ. Նավասարդյան